

ՍՍ-7088

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

1966 թվականի մայիսի 7-ին Սան Ֆրանցիսկոյում, Ս. Հովհաննես հայոց եկեղեցում գումարվել է Հյուսիսային Ամերիկայի Հայոց Արևմտյան թեմի պատգամավորական ժողովը, մասնակցությամբ 53 հոգևորական և աշխարհական պատգամավորների և մեծ թվով ունկնդիրների։

Նիստի սկզբին ներկաները հոտընկայս և ակնածալիր հարգանքով ունկնդրեցին Ամենայն Հայոց Հայրապետի ողջույնի գիրը՝ ուղարկված պատգամավորական ժողովի բացման առթիվ։

Ժողովի օրակարգի գլխավոր հարցը թեմական առաջնորդի ընտրությունն էր։

Թեմական խորհրդի ներկայացրած եռանուն ցանկի վրա, որպես թեկնածու, կային հետևյալ անունները.

Տ. Եղիշե եպիսկոպոս Սիմոնյան

Տ. Հմայակ ծ. վարդապետ Ինթոյան

Տ. Վաչե վարդապետ Հովսեփյան։

Պատգամավորական ժողովը գաղտնի քվեարկությամբ Արևմտյան թեմի առաջնորդ ընտրեց, 47 քվեներով, գերաշնորհ Տ. Եղիշե եպիսկոպոս Սիմոնյանին։

Պատգամավորական ժողովի դիվանի կողմից ընտրության արդյունքը պաշտոնապես հաղորդվում է Մայր Աթոռ։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Իր 7 հունիս սրբատառ կոնդակով հաստատում է ընտրությունը։



ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ